ԳՊՀ-ՈՒՄ ԿԱՅԱՑԱՎ «ԽՈՑԵԼԻՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՊԻ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ԿԱՅՈՒՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԼԾԱԿ» ԽՈՐԱԳՐՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Մայիսի 26-27-ը Գորիսի պետական համալսարանում ԳՊՀ-ի և Ֆրանսիայի Լիլի համալսարանի նախաձեռնությամբ տեղի ունեցավ միջգիտակարգային միջազգային գիտաժողով՝ «Խոցելիությունից դեպի հարմարվողականություն. կայուն զբոսաշրջությունը որպես տարածքային դիմակայության լծակ» խորագրով:

Գիտաժողովի նպատակն էր մեկ հարթակում համախմբել երկրաբանության, հնագիտության, աշխարհագրության, կենսաբանության, պատմության, տնտեսագիտության, իրավունքի և մարքեթինգի ոլորտների մասնագետներին՝ քննարկելու տարածքային դիմակայունությանն առնչվող արդիական խնդիրները և կայուն զբոսաշրջության զարգացման հնարավորությունները:

Գիտաժողովի բացման հանդիսավոր արարողությանը ողջույնի խոսքով հանդես եկան Գորիսի պետական համալսարանի ռեկտոր Տիգրան Վանդունցը, ՀՀ ազգային ժողովի պատգամավոր Արմեն Խաչատրյանը, Ֆրանսիայի Լիլի համալսարանի լեզուների, մշակույթների և հասարակական գիտությունների ֆակուլտետի, կիրառական օտար լեզուների ամբիոնի դոցենտ Գարիկ Գալստյանը, Լիլի համալսարանի պալեոկենսաբազմազանության և պալեոմիջավայրերի պրոֆեսոր Տանիել Դանելյանը, Գորիսում Ֆրանսիայի պատվավոր հյուպատոս, Գորիսի ֆրանսախոսների մշակութային կենտրոնի տնօրեն Կարմեն Ափունցը:

Գորիսի պետական համալսարանի ռեկտոր Տիգրան Վանդունցը, ողջունելով մասնակիցներին, նշեց, որ Գորիսի պետական համալսարանը, որպես Սյունիքի մարզի առաջատար բարձրագույն ուսումնական հաստատություն, արդեն վեց տասնամյակ իրականացնում է տարածաշրջանի կրթական, գիտական և հանրային զարգացման կարևոր առաքելություն: Նրա խոսքով՝ այսօր համալսարանը ոչ միայն կրթական հաստատություն է, այլև կարևոր գիտական ու հանրային հարթակ, որտեղ գիտելիքը ծառայում է համայնքի զարգացմանը, իսկ գիտությունը՝ հասարակական դիմակայունության ամրապնդմանը: Նա ընդգծեց նաև, որ գիտաժողովը կյանքի է կոչվել հայ-ֆրանսիական համագործակցության շրջանակում՝ առանձնահատուկ շնորհակալություն հայտնելով Լիլի համալսարանի հայազգի գործընկերներին՝ նախաձեռնողականության, վստահության և արդյունավետ համագործակցության համար:

Ռեկտորը կարևորեց նաև գիտաժողովի թեմայի ռազմավարական նշանակությունը՝ նշելով, որ ժամանակակից աշխարհում սահմանամերձ և խոցելի տարածքների

կայուն զարգացումը պահանջում է նոր մոտեցումներ, որոնց առանցքում մարդն է, համայնքը, բնությունը և պատասխանատու կառավարումը։

Ռեկտորը նաև շեշտեց, որ գիտաժողովի անցկացումը հենց Սյունիքում խորհրդանշական է, քանի որ տարածաշրջանն իր բնական և մշակութային ժառանգությամբ, մարդկային ներուժով, ինչպես նաև առկա մարտահրավերներով, յուրահատուկ միջավայր է նման քննարկումների համար։ Նրա համոզմամբ՝ գիտաժողովի ընթացքում ներկայացվող գաղափարներն ու հետազոտությունները կարող են վերածվել գործնական լուծումների՝ նպաստելով ոչ միայն Սյունիքի, այլև սահմանամերձ տարածքների կայուն զարգացմանը։

Ամփոփելով խոսքը՝ ռեկտորը շնորհակալություն հայտնեց գիտաժողովի կազմակերպմանն աջակցած բոլոր գործընկերներին, գիտաժողովի կազմկոմիտեի անդամներին, համալսարանի աշխատակիցներին և ներգրավված բոլոր անձանց՝ մեծածավալ նախապատրաստական աշխատանքները բարձր պատասխանատվությամբ և նվիրումով իրականացնելու համար։

Գիտաժողովին ներկա էին ԳՊՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ, ուսուցիչներ, գործատու-գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչներ, ոլորտի մասնագետներ։

Գիտաժողովին մասնակցության հայտ էին ներկայացրել ինչպես Գորիսի պետական համալսարանի, այնպես էլ Ֆրանսիայի, Հայաստանի տարբեր բուհերի և գիտական կազմակերպությունների ներկայացուցիչներ։

Գիտաժողովի շրջանակում կազմակերպվեցին թեմատիկ զեկուցումներ և մասնագիտական քննարկումներ՝ նվիրված կայուն զբոսաշրջության քաղաքականություններին, տարածքային զարգացմանը, գեոժառանգությանը, էկոզբոսաշրջությանը և բնահեն լուծումներին։

Գիտաժողովի հանդիսավոր փակումից հետո հյուրերի համար կազմակերպվեց ճանաչողական այց դեպի Խնձորեսկի ճոճվող կամուրջ և Սուրբ Հռիփսիմե եկեղեցի։ Այցի ընթացքում հյուրերը ծանոթացան Սյունիքի բնաշխարհին, տարածաշրջանի պատմամշակութային ժառանգությանն ու զբոսաշրջային հնարավորություններին։

Օրվա ավարտին հյուրերը միացան նաև Գորիսում իրականացվող «Վարդերի բլուր» նախաձեռնությանը՝ իրենց մասնակցությունն ունենալով քաղաքի բարեկարգման և նախաձեռնության գաղափարի տարածման գործում։

CONFÉRENCE INTERNATIONALE À L'UNIVERSITÉ D'ÉTAT DE GORIS : « DE LA VULNÉRABILITÉ À L'ADAPTABILITÉ : LE TOURISME DURABLE COMME LEVIER DE RÉSILIENCE TERRITORIALE »

Les 26 et 27 mai, l'Université d'État de Goris (UEG), en partenariat avec l'Université de Lille (France), a organisé une conférence internationale interdisciplinaire intitulée **« De la vulnérabilité à l'adaptabilité : le tourisme durable comme levier de résilience territoriale »**.

Cette rencontre scientifique avait pour objectif de réunir sur une même plateforme des experts issus de disciplines variées - telles que la géologie, l'archéologie, la géographie, la biologie, l'histoire, l'économie, le droit et le marketing - afin d'examiner les problématiques contemporaines liées à la résilience des territoires et d'explorer les perspectives de développement du tourisme durable.

Lors de la cérémonie d'ouverture officielle, les allocutions de bienvenue ont été prononcées par :

- **M. Tigran VANDOUNTS**, recteur de l'Université d'État de Goris ;
- **M. Armen KHACHATRYAN**, député à l'Assemblée nationale de la République d'Arménie ;
- **M. Garik GALSTYAN**, maître de conférences au Département de Langues Étrangères Appliquées (LEA) de la Faculté des Langues, Cultures et Sociétés de l'Université de Lille ;
- **M. Taniel DANELIAN**, professeur de paléobiodiversité et paléoenvironnements à l'Université de Lille ;
- **Mme Carmen Apounts**, consule honoraire de France à Goris et directrice du Centre culturel francophone de la ville.

Dans son discours d'ouverture, le recteur de l'Université d'État de Goris, M. Tigran VANDOUNTS, a rappelé que l'UEG, en tant que principal établissement d'enseignement supérieur de la région de Syunik, remplit avec rigueur, depuis six décennies, une mission essentielle de développement éducatif, scientifique et social pour la région. Il a souligné qu'aujourd'hui, l'université transcende son rôle purement académique pour s'affirmer comme un espace d'échange scientifique et citoyen majeur, où le savoir est mis au service du progrès communautaire et la science au service de la résilience sociétale. M. VANDOUNTS a également précisé que cette conférence s'inscrivait dans le cadre de la coopération franco-arménienne, exprimant sa profonde gratitude aux partenaires de l'Université de Lille pour leur esprit d'initiative, leur confiance et la qualité de leur collaboration.

Le recteur a ensuite mis en exergue la portée stratégique de la thématique choisie, rappelant que dans le monde contemporain, le développement durable des territoires frontaliers et vulnérables requiert de nouvelles approches centrées sur l'humain, la communauté, l'environnement et la gouvernance responsable. Il a ajouté que la tenue de ces assises au cœur même du Syunik revêtait une dimension hautement symbolique : par son patrimoine naturel et culturel, son potentiel humain, mais aussi par les défis géopolitiques et structurels auxquels elle fait face, cette région constitue un laboratoire d'étude privilégié. Selon lui, les concepts et les recherches présentés au cours de ces journées sont vocation à se traduire en solutions pragmatiques, contribuant ainsi au développement pérenne du Syunik et, plus largement, des zones frontalières.

En conclusion, le recteur a adressé ses remerciements à l'ensemble des partenaires institutionnels ayant soutenu l'organisation de l'événement, aux membres du comité scientifique et d'organisation, ainsi qu'au personnel universitaire pour leur dévouement et la rigueur dont ils ont fait preuve lors des travaux préparatoires.

La conférence a rassemblé le corps professoral de l'UEG, des enseignants du secondaire, des représentants d'entreprises partenaires ainsi que des professionnels du secteur. Les contributions scientifiques ont émané de chercheurs et d'universitaires issus de l'UEG, de diverses institutions d'enseignement supérieur et de centres de recherche arméniens et français.

Les sessions de travail se sont articulées autour de communications thématiques et de tables rondes spécialisées, consacrées notamment aux politiques de tourisme durable, à l'aménagement du territoire, au géo-patrimoine, à l'écotourisme et aux solutions fondées sur la nature.

À l'issue de la séance de clôture, les participants ont pris part à une visite d'étude guidée au pont suspendu de Khndzoresk et à l'église Sainte-Hripsimé, leur permettant d'apprécier la richesse paysagère, le patrimoine historique et les potentialités touristiques de la région du Syunik. En fin de journée, les invités se sont associés à l'initiative locale « La Colline des Roses » à Goris, contribuant ainsi aux actions d'aménagement urbain et à la valorisation de ce projet citoyen.